

ԱՍՍՈՒԹԻՐ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑՈՒ ՆՈՐԱՀԱՅՅ ՏԱՂԵՐԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 3503 տաղարանը (1394 թ.) հոգեուր երգերի մի մեծարժեք ժողովածու է, որտեղ ընդօրինակված են արտաշարակնոցային ստեղծագործություններ (տաղեր, մեղեղիներ և այլն)՝ ծիսական հազվագեղ ձեռնարկի սկզբունքով։ Որպես այդպիսին այն ավարտուն ձևի մեջ չէ և կարծես, հնից գալով, ձգտել է կատարելության։ Ըստ երևույթին, այդ ընթացքն այդպիս էլ կանգ է առել՝ հանդիպելով, հավանաբար, Գանձարան ժողովածուների և նրանց տաղարանային բաժինների բուռն զարգացմանը։

Քննվող ժողովածուն վազուց է ինչ արժանացել է մեր ուշադրությանը հատկապես իր մի քանի հին տաղերով ու մեղեղիներով։ Այդտեղից էր, որ տպագրեցինք Մովսես Խորենացու մի գողտրիկ մեղեղին¹։ Նաև այդ տաղարանի հիման վրա ենք ճշգրտել Գրիգոր Նարեկացու «Սէր յառաւօտէ» նորահայտ մեղեղին²։ Նշված տաղարանից քաղել ենք ուրիշ ստեղծագործություններ ևս, որոնց թվին են պատկանում սույն հոդվածի համար նյութ հանդիսացող երկու տաղերը։ Դրանք պատկանում են Ստեփանոս Մյունեցուն և ունեն հետեւյալ խորագրերն ու սկզբնատողերը։

ա) Ի Սիւնեաց եպիսկոպոսէ Ստեփանոսէ ի սուրբ խաչն

Սկիզբն անըսկըզբան սկզբնաւորեալ խորհրդոյ սկիզբն...

բ) Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի տաղ սուրբ խաչին

Սրբոյ խաչին զարութիւն վազագոյն տեսեալ...

Առաջին տաղի հեղինակի մասին լրացուցիչ տեղեկություն կա նույն տաղարանի ցանկում. «Ճի՞՛. Ի սուրբ խաչն՝ ի Սիւնեաց եպիսկոպոսէ», իսկ երկրորդի մասին՝ ծայրակապում՝ «Ստեփանոս» և ցանկում. «Ճի՞՛. Սուրբ խաչին Սիւնեաց եպիսկոպոսէ»։

Այդ տաղերի վերաբերյալ կարևոր տեղեկությունների հանդիպեցինք նաև Հայկագյան բառզրքում։ Պարզվում է, որ նրա հեղինակներն իրենց ձեռքի տակ ունեցել են յուրաքանչյուրից մեկ կամ մի քանի ընդօրինակություն և օգտվել որոշ բարդ բառերի բացատրության ժամանակ։ Օրինակ, № 3503 տաղարանում եղած առաջին տաղի «Աւծինաշարժ» բառի բացատրությունը որոնելիս այդ բառարանում հանդիպում ենք Ստեփանոս Մյունեցու համապատասխան տողերին։

1 «Գրական թերթ», 1967, ապրիլ 28:

2 «Գրական թերթ», 1964, հունիս 5:

Լրումն օձինաշարժ զէն՝ յահեկիս աջաւորեալ,
Դէտ ինքն ի լերինն դաշտականի դէմ փառանուն...

(Տե՛ս ստորև տպագրվող բնագրի 23—24 տողերը):

Նույնը պիտի ասել նաև «Նոյինասաստին» բառի վերաբերյալ, որի բացատրության ժամանակ մեջ է բերված հետեւյալ տողը.

Նոյինասաստին նորող կենաց պատճառ ցուցար...

(Տե՛ս ստորև ներկայացվող բնագրի 5-րդ տողը):

«Ծահինախոռվ» բառի մեկնության կապակցությամբ արտագրված է

Սով ուսհինախոռվ նաւակառոյց ծուփ միջնալեաց...

տողը (Տե՛ս ստորև ներկայացվող բնագրի 16-րդ տողը):

Երկրորդ տաղից՝ «սրբարար» բառի կապակցությամբ մեջ են բերված հետեւյալ տողերը.

Որ եղեր սեղան սրբարար հրոյն,
Օրհնեալ ես, խա՛շ, ընծայող լուսոյ...

(Տե՛ս ստորև ներկայացվող երկրորդ տաղի 32—33-րդ տողերը):

Կարենոր է նաև այն, որ այդ տողերի դիմաց առկա են նշումներ.
«Սին. տաղ խչ», այսինքն, Սինեցոյ տաղ Խաչի: Դրան համապատասխան, Ա հատորի առաջարանում տրված աղբյուրների համառոտումներից տեղեկանում ենք, որ բառարանի հեղինակները նկատի են ունեցել Ստեփանոս Սյունեցուն: Պարզ է, որ նրանց օգտագործած ձեռագրերում եղել են որոշակի նշումներ հեղինակի՝ «Ստեփանոս Սյունեցու» մասին: Ուշագրավ է նաև այն պարագան, որ բառարան կազմողները փորձել են որոշել, թե ո՞ր Ստեփանոս Սյունեցու մասին է խոսքը: Նրանք նշում են, թե այդպես են կոչվել շատ գործիշներ, սակայն, իրենք նկատի ունեն երկուսին («առաջնոյն» և «միջնոյն»), որոնց գործերը շփոթված են միմյանց հետ. առաջինը՝ V դարից, իսկ երկրորդը՝ VII: Առաջինին են վերագրում «Աւագ օրհնութեան» շարականները, իսկ երկրորդին՝ առհասարակ «ղջարականնոն»: Ապա ավելացնում են, թե ձեռագրերում «Կան և տաղը պէս-պէս, է՛ որ վսեմ ոճով, և է՛ որ միջակ կամ ստորին՝ առաջնոյն կամ միջնոյն ի դէպ եկեալք»:

Այսպես, ուրեմն, մեզ հետաքրքրող տաղերի մասին արդեն կա նաև կարծիք, որի համաձայն նրանք կա՛մ V դարի Ստեփանոս Սյունեցունն են, կա՛մ VII (իմա՝ VII—VIII դդ.):

Վերջերս Ա. Քյոշկերյանը գտավ քննարկվող երկու տաղերից առաջինի երկու այլ ընդօրինակություններ, որոնք նա սիրով տրամադրեց մեզ օգտագործելու: Դրանցից մեկը, ընդօրինակված Փարիզի աղքային մատենադարանի № 79 ձեռագրում, սկզբից պահպանվոր լինելով, զրկված է խորագրից (ուր կարող էր հեղինակի անունը նշված լինել), իսկ մյուսի (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 7785) խորագրում հեղինակի անվան հիշատակություն չկա:

Առհասարակ առկա երեք ընդօրինակությունները, մասամբ և Հայկագյան բառզրի նշումները, իրենց բնագրագիտական տվյալներով համոզում են, որ գործ ունենք հնից եկող տաղերի հետ, որոնք իրենց գարգացման աստիճանով համապատասխանում են VII—VIII դարերին և հատկապես այդ ժամանակաշրջանի երաժիշտ-բանաստեղծ Ստեփանոս Սյունեցուն:

Բնականաբար, մեզ համար այստեղ հատուկ նշանակություն է ստանում Ստեփանոս Սյունեցու բանաստեղծ լինելու պարագան: Հանրահայտ է, որ նա ստեղծելով հայոց շարակնոցի կանոնները, օգտագործել է մի կողմից՝ պատրաստի երգեր, իսկ մյուս կողմից՝ իր ստեղծած կցուրդ-բանաստեղծությունները: Բացի դրանից, ենթագրաբար, «նա համարվում է հեղինակ Մարտիրոսաց շարականների»³, «Սրբութիւն Սրբոց խաչին»⁴ շարականի և «Աւադօրհնութեան» կանոնների⁵: Ուշագրավ է այն փաստը, որ Ստեփանոս Սյունեցու քույրը՝ Սահակդուխտը, նույնպես երաժիշտ ու բանաստեղծ էր⁶: Հիշենք նաև, որ Ստեփանոս Սյունեցուն է վերագրվում հույն բանաստեղծ Գեորգ Պիսիդեսի «Յաղագս վեցօրեայ արարշութեան» պոեմի թարգմանությունը⁷: Ի վերջո, շմոռանանք, որ նա, ինչպես Մ. Արեգյանն է պնդում, հայոց շարակնոցն ստեղծելուց առաջ, ծանոթացել էր հունական եկեղեցական երգերին ու կանոններին և օգտվել նրանց սկզբունքներից⁸:

Այսպիսով, ունենք բավարար հիմքեր՝ վստահելու նորահայտ երգերի հետ կապված այն վկայություններին, որոնց համաձայն նրանց հեղինակը VII—VIII դարերում ապրած Ստեփանոս Սյունեցին է: Մանավանդ, որ նորահայտ երգերն էլ հանդիսանում են այդ Ստեփանոսի ստեղծագործության տարերը կազմող հոգեոր թեմաների մշակումներ:

Պետք է նկատել, սակայն, որ Ստեփանոս Սյունեցու վերնում հիշատակված շափածո ստեղծագործությունները շարակնոցային բնույթ ունեն (շարական, կցուրդ), մինչդեռ նորահայտ նմուշները պատկանում են արտաշարակնոցային բանաստեղծության բնագավառին և իրենցից մերկայացնում են տաղեր: Հարց է առաջանում. կարո՞ղ էր VII—VIII դարերի բանաստեղծը, տվյալ դեպքում Ստեփանոս Սյունեցին, գրել տաղեր: Այս հարցին պետք է դրական պատասխան տալ՝ հենվելով մի շարք փաստերի վրա: Այսպես՝ վաղուց արդեն հայտնի է, որ նշված դարերից առաջ Հովհան Մայրավանեցին, Դավթակ Քերթողը, Կոմիտաս կաթողիկոսը և ուրիշներ արդեն ստեղծել էին համապատասխան որոշ բանաստեղծություններ: Այնուհետև, վերոհիշյալ N 3503 ձեռագրից ի հայտ եկած Մովսես Խորենացու մեղեդին ևս չի պատկանում շարակնոցային երգերին, ի վերջո, Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայ

3 Մ. Արեգյան, Երկեր, 9, 1968, էջ 539—540:

4 Նույն տեղում, Գ. Ավետիքյանը որոշակիորեն «Սրբութիւն սրբոց»-ը համարում է դորժ Մովսեց տեր Ստեփանոսի («Մեկնութիւն շարականաց», էջ 515): Թվում է, թե զա ճիշտ կլինի, որովհետև Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղի ծայրակապը «Ստեփանոս» ձևով է, իսկ «Սրբութիւն սրբոց»-ինը՝ «Ստեփանոս»: Դժվար թե նույն հեղինակն իր անունը տարբեր ձևերով գրեր:

5. Ղ. Ալիշան, Միսական, 1893, էջ 128:

6 Մ. Արեգյան, Երկեր, 9, էջ 540:

7 Առօ. Երկերի ժողովածու, Բ, 1967, էջ 466:

8 Մ. Արեգյան, Երկեր, 9, էջ 540: Ստեփանոս Սյունեցու կյանքի և պրական ժառանգության, այդ թվում նաև շարականների վերաբերյալ օգտակար դորժ է կատարված Մ. Գրիգորյանի «Ստեփանոս Սիւնեցի» գրքույթում (Պետրով-Լիբանան, 1958):

Հին մեկնիչները, այդ թվում նաև ինքը՝ Ստեփանոս Սյունեցին, արդեն խոսում են տաղի և նույնիսկ արտաեկեղեցական բանաստեղծությունների առկայության մասին։ Ուստի տեսականորեն հարավոր է, որ Ստեփանոս Սյունեցին ևս գրած լիներ հոգեոր տաղեր ու այլ երգեր։ Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն նա, իրոք, գրել է շարականներ, կցուրդներ և ուրիշ երգեր։ «Արար և երգս հոգեորս բաղցր եղանակաւ՝ շարականս և կցուրդս և այլ երգս»⁹։ Մ. Արեգյանը քննելով այս հաղորդումը, միաժամանակ վկայակոշում է Ստեփանոս Օրբելյանին և առաջնությունը տալով նրան, Ստեփանոս Սյունեցու բանաստեղծությունները համարում է միայն շարականներ (այն էլ կասկածելով) ու կցուրդներ¹⁰, մոռանալով, որ Կիրակոս Գանձակեցին թվարկում է հոգեոր երգի ոչ թե երկու, այլ երեք տեսակ. «շարականս, կցուրդս և այլ երգս»¹¹։ Եվ բանի որ շարակնոցները, բովանդակելով առհասարակ հոգեոր երգեր, իրականում բաղկացած են շարականներից և կցուրդներից, պարզ է, որ Ստեփանոս Սյունեցու մասին ասված «շարականս, կցուրդս և այլ երգս» դարձվածքի համաձայն, նրան պիտի համարել նաև այնպիսի երգերի հեղինակ, որոնք շեն համընկնում «շարական» և «կցուրդ» հասկացություններին։ Այս հենց այդպիսիներից են նորահայտ տաղերը։

Ասացինք արդեն, որ Մ. Արեգյանը, քննելով մեր հին հոգեոր երգերը, նրանց մեջ տեսնում է շարականներ և կցուրդներ։ Պետք է նկատել, սակայն, որ նա կցուրդների տակ է զետեղում թե՛ աստվածաշնչային հարասացությունները, թե՛ նրանց նման ստեղծված կցուրդները, թե՛ փոքր-ինչ ինքնուրույն երգերը և թե՛ ավելի ավարտուն ու ամբողջական ստեղծագործություններ։ Այլ կերպ ասած, կցուրդ հասկացությունը շատ է ընդարձակվում և առաձգականանում։ Ըստ երեսութիւն այստեղ են ներառնված նաև Կիրակոս Գանձակեցու բնութագրած «այլ երգերը», որոնք ավելի ճիշտ գնահատվելիս պիտի որ դուրս բերվեն կցուրդներից և դրվեն առանձին կոշումի տակ։ Մեր կարծիքով, հենց այստեղ պիտի որոնել մեր հոգեվոր երգի այն տեսակները, որոնք հետո ավելի զարգացան և տարածվեցին որպես տաղ ու մեղեղի։ Իրականում վերջիններիս սկիզբը ցույց է տրվում Գրիգոր Նարեկացու մոտ, որով նրանց վաղ շրջանի պատմությունը մթագնվում է։ Ստեփանոս Սյունեցու քննվող տաղերը, ինչպես և այլ ստեղծագործություններ օգնում էն սույն հարցի մեջ որոշ պարզություն մտցնելու գործին։

Որ արդեն VII—VIII դարերում եղել են նաև տաղեր, դա արդեն փաստ է՝ գեթ ի գեմս Ստեփանոս Սյունեցու նորահայտ բանաստեղծությունների, որոնք Հայկագյան բառգրքի վկայության համաձայն ևս պիտի կոչվեն «տաղք»։

Քննվող հարցի կապակցությամբ բացառիկ արժեք ունի նաև բանաստեղծի բրոջ՝ Սահակղուխտի «Սըրբուհի Մարիամ...» սկզբնատառերով գրքած բանաստեղծությունը։ Մինչև վերջին ժամանակներս այս սկզբածքի տակ մի օտար բեկոր էր պատկերացվում։ Մեծ բարերախտությամբ ն. Պողարյանը (Սովական) գտավ և տպագրեց իսկականը՝ բաղելով 1491 թ. մի ժողովածուից, որը բովանդակում է շարականներ, մանրուսմունք, կցուրդներ, մեղեղի-

⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Շանչանցանի, Երևան, 1961, էջ 72.

¹⁰ Մ. Արեգյան, Երկեր, 9, էջ 539—540։

¹¹ Մ. Արեգյանի օգտագործած Հրատարակության մեջ՝ «շարականս, կցուրդս և երգս»։

ներ, տոնացույց և ավետարանացույց¹²: Ի՞նչ է իրենից ներկայացնում այս բացառիկ նմուշը, տա՞ղ, մեղեղի՞, շարակա՞ն, թե՞ կցուրդ: Մեր ունեցած պատկերացումների համաձայն, դա պատկանում է տաղ-մեղեղիների և ոչ թե շարական-կցուրդների շարքին: Այս կապակցությամբ հետաքրքրական է Մտեփանոս Օրբելյանի վկայության այն հատվածը, ուր Սահակուխտի մասին ասվում է, «Եւ արար կցուրդս և մեղեղիս քաղցրեղանակս, յորոց մին՝ Սրբուհի Մարիամ, որ իւրով անուամբ է յօրինեալ»¹³: Այս վկայությունը մեղ համար այստեղ արժանի է ուշազրության մի շարք առումներով: Նախ, որ նշված գործն ըստ այդ վկայության կոչվում է կամ կցուրդ կամ մեղեղի, երկրորդ, որոշակիորեն վկայվում է, որ VIII դարում կային մեղեղիներ, և բանաստեղծի քույրն էլ է գրել այդպիսի բանաստեղծություններ: Քանի որ Սահակուխտի երդը գտնվում է հրապարակի վրա, իսկ մենք որոշ գաղափար ունենք տաղերի ու մեղեղիների ընդհանուր կառուցվածքի մասին, ուստի կարող ենք ասել, որ դա էլ մի սովորական մեղեղի է կամ տաղ:

Հետաքրքրական է նաև հետեւյալ հանգամանքը: Այդ կցուրդը կամ մեղեղին ձեւական առումով նման է Մտեփանոս Սյունեցու երկրորդ տաղին: Երկուսն էլ գրված են կրկնակներով, երկուսն էլ ունեն նույնաձև ծայրակապ («Մտեփանոս», «Սահակուխտ»), երկուսն էլ գրված են համեմատաբար պարզ ոճով և հեռու են ճարտասանական ձևերից ու խրթնությունից: Ահա մեկական տուն այդ ստեղծագործություններից, որոնց վերջին 2-ական տողերը՝ նրանց կրկնակներն են:

Մտեփանոս Սյունեցու երգն սկսվում է այսպիս:

Սրբոյ խաչին զարութիւն վաղագոյն տեսեալ,
Մարգարէից սրբրոց գուշակեալ:
Աւրծնե՞ալ է փայտն՝ ընծայող լուսոյն,
Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց...

Ահա և Սահակուխտի երգի առաջին տունը.

Սրբուհի Մարիամ, անապական տաճար
Եւ կենարար բանին ծրնաւղ և մայր,
Աւրծնե՞ալ ես դու ի կանայս,
Բերկրեալ տիրամայր և կոյս...

Հենց լոկ այս փաստերը ցույց են տալիս, որ իրոք գործ ունենք միասնա ստեղծագործությունների հետ, որոնք ճնում կարող էին կոչվել երգ, մեղեղի, անգամ կցուրդ, բայց ոչ երբեք շարական: Հետագայում հենց նման գործերն էին, որ ճանաշում գտան որպես մեղեղի, երբեմն էլ որպես տաղ՝ կապվելով գանձարան ժողովածուների և երաժշտական հատուկ եղանակների հետ:

Այդ նմուշներում առկա խոսքի մեջ շունչը, կրկնակների հավելյալ քնարականությունը և այլ տվյալներ ինքնին նրանց կապում են ժողովրդական երգերի հետ: Ինքը՝ Մտեփանոս Սյունեցին, խոսելով իր ժամանակի քնարական երգերի մասին, պրում է: «Եւ զբնարական քերդութիւն ներդաշնակալէս, այ-

12 «Հասկ», 1951, էջ 366:

13 Մտեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 182:

սինքն զգուսանական դալլալիկն, նման սմին թեթևս լրնթացուցանել ըստ նմին խորհրդոց. և ստեղծանին ամենայն դալլալիկն հազներգութեամբ և ոչ այն միայն, այլև յաստուածայինս¹⁴; Խոսելով գուսանական-աշխարհիկ երգերի ու կրոնական բռվանդակություն ունեցող ստեղծագործությունների առնչությունների մասին, Ստեփանոս Սյունեցին ուշագրավ տեղեկություններ է տալիս նաև քնարական բանաստեղծությունների այլ տեսակների վերաբերյալ: Օրինակ, «զխանդաղատական թուլակի և աշխարապէս» դարձվածքի կապակցությամբ նա գրում է. թե պիտի նկատի ունենալ «զգգուռղական և զփաղաքական» ենթատեսակը, «որ լինի գորովական բանք առ տղայս և կամ առ սիրելիս և առ եղբարս, երբեմն ի կենդանութեան և երբեմն ի մահունոցա...»¹⁵:

Չխորանալով այլ մանրամասնությունների մեջ, կարող ենք ասել, որ, իրոք, Ստեփանոս Սյունեցու օրերին հրապարակի վրա էին զանազան երգեր, այդ թվում նաև տաղեր, մեղեդիներ՝ շարադրված ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգեոր թեմաներով:

Ունենալով այսպիսի պատկերացում նշված երկու տաղերի հեղինակային պատկանելիության հարցում, այստեղ կկամենայինք մատնացուց անել մի ուշագրավ երկույթ ևս: Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերի մեջ արդեն առկա են տարատեսակության որոշակի տվյալներ: Եթե առաջինն աղատ բանաստեղծությամբ հորինված խրթնառն ստեղծագործություն է՝ հարուստ ճարտասանական արտահայտչամիջոցներով և արտասովոր բառարարումներով, ապա երկրորդը, ինչպես նշվեց, գրաբարի միանգամայն սովորական բառապաշտով և համեմատաբար հասկանալի ոճով է զրված: Այստեղ առկա կրկնակային քնարականությունն էլ մտածել է տալիս՝ արդյո՞ք մեկը տաղ, մյուսը մեղեդի շէ՝ զրված նույն տոնի համար:

Այս հարցի քննությունը թողնելով աղագային, երբ ձեռագրերից երեան կդան նոր տվյալներ, այժմ փորձենք փոքր-ինչ անդրադառնալ հատկապես առաջին տաղի բանարվեստին:

Նշված տաղի մեջ զլիավորը՝ աղատ բանաստեղծության այն մշակված ու կայուն տեսքն է, որը կարող է համարվել դասական: Հիմքը՝ աղատ բանաստեղծությունն է, որի արվեստը դալիս է շատ վաղ ժամանակներից: Պետք է նկատել, որ այդ բանաստեղծությունը դուրս է եկել շարականներին, կցուրդներին, ողբերին, «քաջոլորակի» տաղերին և այլ նմաններին հատուկ ձևերից ու նրանց ծավալներից, միտելով դեպի այն նոր տարատեսակը, որ հետագայում պիտի ճանաչվեր որպես հոգեոր տաղ և որին պիտի հետևեին Գրիգոր Նարեկացին ու նրա հաջորդները:

Ինչպես զիտենք, աղատ բանաստեղծության ամենագլխավոր գործոնը տողային միավորն է, ուր խոսքի ընթացքը՝ մտքի ու շափի առումով ծավալվում է այդ ոիթմիկ հատվածների օգնությամբ: Ստեփանոս Սյունեցին, որպես հայ և հունական քերթության լավատեղյակ բանաստեղծ ու մեծ երաժիշտ, կարողացել է իր առաջին տաղում բացառիկ վարպետությամբ օգտվել տողի մասին ասված այդ հիմնական առանձնահատկությունից: Նրա տաղի բոլոր տողերն

¹⁴ Н. Адони. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 193:

¹⁵ Նույն տեղում, էջ 194:

այնքան անկախ ու ավարտում տեսք ունեն, որ միմյանցից անջատվում են Հիմնականում կամ միջակետով, կամ վերջակետով:

Ստեփանոս Սյունեցին որպես ոիթմերի վարպետ, ձգտել է որրան հնարավոր է մոտենալ հավասարաքանակ տողային միավորների: Ըստ այդմ էլ բանաստեղծության մեջ վանկերը մոտավորապես նույն քանակն ունեն՝ 13—16, ուր էլ իշխում են 13—14 վանկանոց տողերը: Այստեղ ներքին ոիթմի նույն ընկալումը և երաժշտական եղանակի խաղացած դերը՝ տաղի ստեղծման պահին, նպաստել են, որ ամեն տող որոշակիորեն ունենա 3-ական ոտք: Այդ ոտքերից առաջինը երբեմն տատանվում է 5—6 վանկերի միջև, իսկ երկրորդն ու երրորդը, որպես կանոն, բաղկացած են 4-ական վանկերից: Ուստի Հիմնական միավորները 5—4—4 կամ 6—4—4 ոտքերն են:

Տաղաշափական առումով Ստեփանոս Սյունեցու առաջին բանաստեղծությունը մեզ հայտնի առաջին ընդարձակ (56 տող) ստեղծագործություններից է, որն ամբողջապես շափում է կանոնավոր տաղաշափության միտող կայուն ոտքերի վրա, որի շնորհիվ էլ ծնվել է մեծապես երաժշտական տաղ:

Այդ նույն երգն աշբի է ընկնում նաև մի ուրիշ առանձնատկությամբ, դա տողերի ծանրաբեռնվածությունն է գաղափարական խտացված բովանդակությամբ: Տաղի առաջին կեսում իշխում են ստվածաշնչային դրվագները. ամեն տողում մեկ կամ երբեմն էլ մի քանի դրվագ է խտացված և հարմարեցված բուն թեմայի՝ ո. խաչի դրվատմանը: Դրանցից յուրաքանչյուրը հասկանալու համար պետք էր քաջածանոթ լինել աստվածաշնչին: Վերցնենք հետեւյալ տողը, ուր նորից խոսքը ո. խաչի մասին է. «Արրահամինափորձ սարեկանից ծառ ծաղկեցար»: Այստեղ ակնարկված է Արրահամի հավատարմության, նրա կրած փորձության, որդուն՝ Իսահակին զոհաբերության տանելու զրուցի, սարեկա ծառի ճյուղերից կախված խոյի հայտնվելու, դրանով Իսահակին որպես զոհի փոխարինելու ողջ պատմությունը: Նույնը կարելի է ասել նաև «Ամաղեկամարտ սուր ի ձեռին Մովսիսի» տողի վերաբերյալ, որը պահանջում է իմանալ Ամաղեկի դեմ Մովսեսի հովանավորած մարտի պատմությունը:

Այս կապակցությամբ յուրատեսակ խտացումների ենք հանդիպում ի դեմս ճոխ բառաբարդումների: Հենց վերելում բերված օրինակներից վերցնենք «Արրահամինափորձ» «սարեկանից», «Ամաղեկամարտ» ձևերը, որոնց նմաններով այնքան հարուստ է քննվող տաղը:

Ուշագրավ արժանիքներ ունի նաև Ստեփանոս Սյունեցու երկրորդ տաղը, մանավանդ իր կանոնավոր տներով, փոքր ծավալով, կրկնակով, լեզվով, ոճով և այլ առանձնահատկություններով:

Այս երկու տեսակին էլ մեծ ապագա էր վիճակված: Դրանք, ինչպես նաև Մովսես Խորենացու և Սահակդուխտի վերոհիշյալ մեղեղիները վկայում են, որ նման ուրիշ տաղեր ու մեղեղիներ են պիտի եղած լինեին Ստեփանոս Սյունեցու օրերին, ինչպես նաև նրանից առաջ ու հետո ընկած ժամանակներում: Եվ Հիմնականում հենց այդ դեռևս պատշաճորեն չնկատված ու վեր շահնված շերտի վրա է, որ հետագայում Գրիգոր Նարեկացու հզոր զրշի տակ իրենց որոշակի կերպարանավորումն են գտնում տաղերն ու մեղեղիները:

Իսկ, որ իրոք, Գրիգոր Նարեկացին կարող էր օգտված լինել նման ստեղծագործություններից, դրա ապացույցը տալիս է Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերից առաջինը: Բերենք մի քանի փաստ:

Գրիգոր Նարեկացին հաճախ իր տաղերն սկսում է նույնանման և նույնաշնչուն բառերով, այսպես՝

Ի նոյն նորոյ նորին, նոյն նիւթ...

կամ՝

Էն էին անէին եղանի եղակ եղկելի...

Այս եղանակով է ստեղծված նաև Ստեփանոս Սյունեցու առաջին տաղի սկիզբը.

Սկիզբն անըսկրպրան սկրպինաւորեալ խորհրդոյ սկիզբն...

Ստեփանոս Սյունեցու այդ տաղում կան առանձին գարձվածքներ ու բառաձևեր, որոնց նմանություններին հանդիպում ենք նաև Գրիգոր Նարեկացու տաղերում. օրինակ, Ստեփանոս Սյունեցու մոտ կարդում ենք. «...Ծով ուսինախոռվ... խաղայր դարձ նոյն ի դարձ»: Գրան համապատասխան Գրիգոր Նարեկացու մոտ առկա է. «Ծով խոր հերձաւ... դարձ նոյն ի դարձ խաղայր»: Ստեփանոս Սյունեցին զրում է «գեղաշիտակ տունկ կիպարի», իսկ Գրիգոր Նարեկացու մոտ կարդում ենք. «գեղաշիտակ ծայրից ծաղկանց»: Առատ են նման սկզբունքով ստեղծված բառարարդումները. անեղինաշշնիեղեղնաշշն, հերձինապտոյտ/շրջանապտոյտ և այլն: Չփորձելով շարունակել զուգորդումները, թվարկենք Ստեփանոս Սյունեցու առաջին տաղում հանդիպող մի քանի ուրիշ բառարարդումները, որոնք ինքնին հիշեցնում են Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում առկա համապատասխան բառաձևերը. «անվայրենափակ», «միջնածագիկ», «բազմաշաւիդ», «նոյինասաստ», «Արրահամինափորձ Սարեկաճիւղ ծառ», «խայտախարիւր», «Ամաղեկամարտ», «շաւիդինաշնորհ», «կառակերտեալ» և այլն: Կան տողեր, որոնք եթե նույնությամբ շեն հանդիպում Գրիգոր Նարեկացու տաղերում, այդուամենայնիվ, հիշեցնում են նրան: Առա մի այդպիսի հատված.

Սարդին և սոսին նոճ մայրենի խիտ յանտառէ.

Լրումն աւծինաշարժ զէն յահեկին աշաւորեալ.

Դէտ ինքն ի լերինն դաշտական՝ ի դէմ Փառանոյ...

Այսպիսով կարող ենք համոզված ասել, որ Ստեփանոս Սյունեցու հրատարակվող տաղերը, Մովսես Խորենացու և Սահակդուխտի մեղեղիները այն առաջին ստեղծագործություններն են, որոնք որոշակի հիմք են տալիս համապատասխան ստեղծագործություններ որոնել Գրիգոր Նարեկացուց առաջ ընկած ժամանակներում: Նման նմուշների հայտարերումն ու քննությունը հիմք կտան բացահայտելու մեր միջնադարյան բանաստեղծության այն ճյուղավորման սկզբնական շրջանի պատմությունը, որի հիման վրա և գրական ընդհանուր առաջընթացի շնորհիվ աճեցին ու զարգացան մեր հոգենոր տաղերն ու մեղեղիները:

Գալով տպագրության ներկայացվող տաղերի գաղափարական բովանդակությանը, պիտի ասել, որ զրանք երկուսն էլ վերաբերում են ս. խաչի գրվատմանը: Երկուսի էլ նպատակն է եղել քրիստոնեության ամրապնդման բարոզը: Այս առումով առանձնապես կրրով ու սուր նպատակադրությամբ է զրբ-

ված առաջին տաղը: Հեղինակը, քաջածանոթ լինելով աստվածաշնչային բոլոր զրվագներին, ընտրել է համապատասխան իրողություններ, զաղափարներ և նրանց օգնությամբ զրսեորել իր ժամանակի տիրող իրականության որոշակի վերաբերմունքը՝ մի կողմից քրիստոնեության, իսկ մյուս կողմից նրա հակառակորդների նկատմամբ: Տաղի միջով անցնում է մարտական տրամադրություն, մի քանի, որ շի նկատվում երկրորդ տաղում: Եթե վերջինում ո. խաչը զրվատվում է մերթ որպես «տունկ անմահութեան», մերթ՝ «երկնաւոր սանդուղը», մերթ՝ «փառաց աթոռ», ապա այդպիսին շէ առաջին տաղի, մանավանդ նրա երկրորդ կեսի ողին: Ահա մի քանի տող այդ մասից:

Սա է ամրութիւն, պարիսպ՝ ընդդէմ ճակատողաց...

Սա է ախոյեան թագաւորաց և իշխանաց.

Սովաւ զարանան ազատագունդը տիեզերաց:

Սա՝ անզարտելի սուսէր ընդդէմ զարավարաց...

Սա է ահարկու յահեղ աւուրն ապրստամբիցն...

Ահեղակերպ փայլմամբ հուր կիզանող խրնդիր վիրժուց...

Այս տողերում խաչը ներկայացվում է արդեն ոչ թե աստվածաշնչային անցյալի հերոսապատումների հենքի վրա՝ ինչպես տաղի առաջին մասում, այլ բանաստեղծի ժամանակվա առօրյացի:

Գ. Ավետիքյանը, խոսելով Ստեփանոս Սյունեցուն վերագրված մի շարականի («Սրբութիւն սրբոց...») մասին, գտնում է, որ այն պատկանում է Խ դարի գործիչ Ստեփանոս Մոկացուն, միաժամանակ ավելացնելով հետեւյալ միտքը. «...յարմարի ևս այլոց հանգամանաց ժամանակին. զի յայսմ դարու զօրացան պաւիկեան ազանդաւորք՝ արհամարօղը խաչի, եկեղեցւոյ և ամենայն սրբազն պաշտամանց ընդդէմ որոց վարդապետք ժամանակին զինեցան բազում օրինակաւ»¹⁶: Պետք է նկատել, որ Խ դարում ոչ թե պավլիկյաններն էին զորացել, այլ թոնզրակեցիները: Միաժամանակ պետք է ավելացնել, որ Գ. Ավետիքյանի դիտողությունը ճիշտ կլիներ նաև Ստեփանոս Սյունեցու տաղերի կապակցությամբ, երբ, իրոք, ծավալվում էր պավլիկյան շարժումը:

Իսկ, որ Ստեփանոս Սյունեցին ևս գտնվում էր նման պայքարի մեջ, դա վկայվում է նրա երկերի միջով անցնող համապատասխան հայացքներով և հատկապես իր մի զրվածքի բովանդակությամբ, որի խորագիրն է. «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի... տացեալ ի զիմաց հերետիկոսաց»¹⁷:

Բատ երեւյթին Սյունիքում էլ նա ստիպված էր պայքարել ազանդավորական տրամադրությունների գեմ. «Եւ սրբեաց ճիւաղաբարոյ երկիրն Սիւնեաց յամենայն պղծութենէ, և լուսաւորեաց զնոսա գիտութեամբ աստուածային օրինացն»—տավում է նրա կենսագրության մեջ¹⁸:

Մատնացուց արվող պարագան ուշագրավ է առհասարակ թե՛ Ստեփանոս Սյունեցու և թե՛ ուրիշների զրած համապատասխան ստեղծագործությունների կապակցությամբ: Ռևոտի անհարկի շէր լինի նշել մի քանի օժանդակ փաստ: Դեռևս Ն դարի համար վկայված է, որ ժամանակի զույգ կաթողիկոսների մոտ

16 Գ. Ավետիքյան, Բացաւորութիւն շարականաց, Վենետիկ, 1815, էջ 515:

17 Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., Բ, 1924, էջ 1059: Տե՛ս նաև Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 841, թերթ 40ր:

18 «Դիրք որ կոչի Ալամաւորք», Կ. Պոլիս, 1730, էջ 668 (ԶՃԿԲ):

են գալիս Անտիոքի Ավշին զյուղի աղանդավորները և հայտարարում, թե «ոչ գոլ զՄարիամ աստուծածին, և ոչ զիաշն աստուծոյ խաչ, այլ զողոց պատժարան»; Նրանց և նրանց նմանների դեմ պայքարելու նպատակով է ստեղծված Դավիթ Անհաղթի անունով շրջանառության մեջ զրված հոչակավոր ներբողը՝ «Ի սուրբ խաչն» («Յարձրացուցէք զտէր աստուծ...»)¹⁹; Այստեղ էլ մարտական ոգին ցցուն է՝ ի դեմս խաչի զրվատման. «...Յազաւորաց յաղթանակ, իշխանաց յոյս քաջութեան, քրիստոսամէր զօրաց յառաջապահեստ, ախոյանաց քաջալերութիւն... անզգամաց զգաստութիւն, ստահակաց խրատ, բնդ վայրապարաց նահանջ...»²⁰:

Համանման հիմք ունեն նաև Թեոդորոս Քոթենավորի ներբողները՝ «Ի սուրբ խաչն» և «Ի սուրբ կոյսն»: Ուշագրավ է զրանց նախորդող «Ընդդէմ Մայրագոմեցոյն» մեղադրականը, ուր հեղինակը նկատի ունի իր ժամանակի աղանդավորներին, մանիքեցիներին, ուստի և պավլիկյաններին, որոնց հետ ունեցած կապի մեջ իրոք մեղադրվել է Հովհան Մայրագոմեցին: Վերջին փաստը համբնկնում է Ստեփանոս Սյունեցու գործած ժամանակին և աշխարհագրական կողմերին²¹:

Այդ պայքարը նոր ձևով շարունակվեց թոնդրակեցիների կողմից, որոնք նույնպես ժխտում էին Քրիստոսի, խաչի, աստվածամոր պաշտամունքը: Նրանք էին, որ խորտակեցին Մանանաղյաց գավառի հոչակավոր խաչքարը, ինչպես նաև մյուս խաչքարերը²² «ուր և դիպող ժամ հանդիպէր նոցա»²³:

Եվ եթե աստիճանաբար ծնվում էին եկեղեցուն, խաչին ու աստվածամուրը նվիրված զանազան ներբողներ, շարականներ, տաղեր, ապա զրանց մեջ համարյա միշտ էլ առկա էր նաև իր ժամանակի աղանդավորների դեմ մղվող պայքարի ոգին: Կարելի է ենթազրել, որ խաչքարերի ստեղծման սկզբնական շրջանի պատմությունն էլ իր շարժառիթներով, թեկուզ և մասամբ, կապված է եղել այդ պայքարի հետ: Նշված պայքարի արձագանքները այսօր հաճախ գժվար է նկատել, որովհետև ընդունված սովորության համաձայն համապատասխան մտքերը փոխարերաբար էին ձևակերպվում և ընդհանրացումների եղանակով էին զրսենորվում²⁴:

Առհասարակ Ստեփանոս Սյունեցու նորահայտ տաղերը մեծարժեք ստեղծագործություններ են՝ ինչպես իրենց գրական տեսակի, տաղաշափական առանձնահատկությունների, արվեստի, լեզվի, ոճի, այնպես էլ զաղափարական բովանդակության առումով: Նրանք պակաս նշանակալից չեն նաև իրենց ունեցած երաժշտական եղանակներով, որոնցից այսօր մեզ են հասել խազային

19 «Մատենագրութիւնք նախնեաց» (Կորիւն, Մամբրէ, Դաւիթ), Վենետիկ, 1833, էջ 99—119:

20 Նույն տեղում, էջ 117—118:

21 «Մատենագրութիւնք նախնեաց» (Յովհանու Խմաստասիրի). այս գրքի վերջին մասումն են գտնվում Թեոդորոս Քոթենավորի նշված երկերը: Տե՛ս նաև «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1957, № 6, էջ 96:

22 Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Երևան, 1963, էջ 125—133:

23 Նույն տեղում, էջ 128:

24 Առհասարակ պիտի նկատել, որ այս կարևոր հարցը մինչև օրս մասնագետների կողմից լուրջ քննության առարկա չի դարձել: Նրանցից յուրաքանչյուրը իրեն հետաքրրող առանձին փաստերի կապակցությամբ է միայն, այն էլ երբեմն, փորձել մոտենալ նրան, մինչդեռ մեր մատենագրության հարուստ ու բազմակողմանի նյութերում նման վիճակում լուծ են մնում մեր անցյալի իրականության համապատասխան արձագանքները:

ճոխ, բայց լուս վկաները: Ինչ խոսք, մեծ երաժիշտը, որ հիմնեց Հայոց շարակնոցային կարգերը, հենց ինքն էլ ստեղծած կլիներ իր տաղերի եղանակները:

Քննվող տաղերը ձեռագրերում, երաժշտական առումով ունեն մի քանի ուրիշ հատկանիշներ ևս: Այսպիս, առաջին տաղը բաժանված է 3 մասի՝ որպեսզի երգը երգվի տարրեր եղանակներով: Նրանցից 2-րդի դիմաց նշված է «Այլ ազգ». Անարատ տաճարին ձայն», ուր նկատի է առնված, հավանաբար, ն. Շնորհալու նույնասկիզբ տաղը («Անարատ տաճար և առագաստ լուսոյ»)²⁵: Իսկ երրորդի դիմաց՝ «Այլ ազգ». Հոսեալ հրեղին[աց]», ուր, ըստ երկույթին, նկատի է առնված նույնասկիզբ մի հին ու անանուն տաղ²⁶: Բացի դրանից, նորահայտ երկու տաղերին էլ կցված են մեկական ուրիշ երգեր որպես «փոխ»-եր, որոնցից առաջինն սկսվում է «Եռորդուրդ կենաց բերումն» (№ 3503, 228ա-բ), իսկ երկրորդը՝ «Այսաւ ցընծա, նշան յաղրող, փայտ Փրկարքեան...» (№ 3503, 235բ—237ա) տողով: Դրանք երկուսն էլ տարրեր շափով ու տարրեր կառուցվածքով ստեղծված ավարտուն, ամբողջական այլ երգեր են: Ո՞վքեր են վերջիններիս հեղինակները, դժվար է ասել: Ճիշտ է, երկուսից էլ առանձին տողեր են առնված Հայկազյան բառզրկում²⁷ և նշված նորից Ստեփանոս Սյունեցու անունով, սակայն հայտնի չէ, թե ինչպիսիք՝ են եղել նրանց հիմքերը: Արդյոք այդ տաղերն առանձին-առանձին են հանդիպել նրանց՝ Ստեփանոս Սյունեցու անվան որոշակի նշումով, թե՝ նրանց օգտագործած ձեռագրերում էլ այդ տաղերը կցված են մեզ հետաքրքրող նորահայտ տաղերին՝ որպես փոխեր: Եթե նրանք էլ փոխի դերով են հանդիպում, ինչպես մեր օգտագործած ձեռագրում, ապա դա հիմք չի տալիս դրանց վստահաբար կապել Ստեփանոս Սյունեցու անվան հետ, որովհետև փոխերը սովորաբար ուրիշ գործեր են և ձեռագրերում մեխանիկորեն են մուծվում հիմնական տաղերի հեղինակների անվան տակ՝ առաջացնելով թյուրիմացություններ:

Հավանաբար այդպիսիք են և քննվող փոխերը: Միաժամանակ նկատենք, որ մեզ ծանոթ ձեռագրում առկա են մի քանի օժանդակ տվյալներ ևս այդ փոխերը Ստեփանոս Սյունեցուն վերագրելու համար, որոնք սակայն խիստ անբավարար են: Ուստի մենք առայժմ բավարարվում ենք այդ փոխերի վրա ուշադրություն հրավիրելով: Տպագրության ենք հանձնում միայն նորահայտ երկու տաղերը, առաջինը՝ մեզ հայտնի երեք, իսկ երկրորդը՝ մեկ ձեռագրի հիման վրա՝ կցելով փոքրիկ բառարան՝ առաջին տաղի որոշ բառերի բացատրության համար:

25 Ն. Շնորհալի, Բանք Համար, Վենետիկ, 1928, էջ 444—447:

26 Պահպանված է № 9053 (թերթ 44ա—45ա) և այլ ձեռագրերում:

27 Առաջինից «Սրովքապահակ» բառի բացատրության ժամանակ մեջ են բերված հետևյալ տողերը. «Սրորէապահակ դրախտին՝ Բացումն ամբացեալ ցանգոյն», իսկ երկրորդից՝ «Սովահերձիկ» բառի բացատրության մեջ:

Տպագրվող տաղերի մասին տե՛ս «Սովետական Հայաստան», 1961, հունվար 29 («Միջնադարյան նորահայտ երգեր»):

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ

1. Ե Սիւնեաց եպիսկոպոսէ Ստեփանոսէ ի սուրբ խաչն

Սկիզբն անըսկրգրան սկրզբնաւորեալ խորհրդոյ սկիզբն.
Անեղինաշէն տունկ բարձրունոյ ստեղծեալ ուղէշ.
Անվայրենափակ միջնածաղիկ սահման կենաց.
Էն միատեսակ երկուց ներհակ բազմաշաւիդ:
5 Նոյինասաստին նորոգ կենաց պատճառ ցուցար,
Արքահամինափորձ սարեկաճիւղ ծառ ծաղկեցար:
Ղարանու և Ֆակորայ Հաւոտ երամից խայտախարիւր,
Ջուրց աւազանին գեղաշիտակ տունկ կիպարի:
Ամաղէկամարտ սուր ի ձեռինըն Մովսիսի,
10 Զնոյն առ փարաւոն հերձինապտոյտ ուհ ապաքին:
Բրաբիոն բազմաւրինակ, նիշ ի ճակատ անդրանկա դրացն,
Համ համազարդեալ լոյս երեսաց մեզ գուշակեաց.
Շաւիղինաշնորհ ուղղեալ ի մայր կիրանանու:
Ճիղ կառակերտեալ ամբարձաթոիշ ամպրոպային.
15 Քիրամի նուէր խնդիր յումեմնէ իմաստոյ:
Ծով ուահինախոռով, նաւակառոյց ծուփ միջնալեաց,
Խաղայր դարձ նոյն ի դարձ, զերասանակ ջուրցըն կապտէր.
Պետ իմաստութեան կազմեալ ընդ ծով ասպարիսին.
Փառք կայ ի յաշմէ Սիոնի սկիզբն ի Սինայէ.
20 Մէիր թերայեան գետավրտակ ելումն ի լոյս.

Աղբյուրներ

Ա=Զեռ. № 3503, թերթ 226ա—228ա, ժամանակ 1394 թ.:

Բ=Փարիզի աղջ. Մատ., ձեռ. № 79, թերթ 385ա—385բ, ժամանակ՝ 1241 թ.:

Ը=Զեռ. № 7785, թերթ 436ա—438ա, ժամանակ՝ XIV դ.:

Խորագիր

Ա Սունեաց փխ. Սիւնեաց: Բ Խորագիր շիք. թերթ է ընկել: Ը Տաղ սրբու խաչին կենարարին Քրիստոսի աստուծոյ:

Բնագիր

- 1 Բ 1—5-րդ տողերը չիք:
- 4 Ա բազմաշաւեղ:
- 6 Ա Արքամինափորձ սարեկայնուղ: Բ Պահպանված մասը՝ 6-րդ տողի կեսից. «...կանուղ ծառ ծաղկեցար»: Ը սարեկանուղ:
- 7 Ա «Ղարանու» բառի դիմաց լուսանցքում ուղղման նշանով «Ղա»-ի փոխարեն ցույց է տրված «Բա»: այս ուղղումը («Բարանու») միշտ չէ: Բ Ֆակորա: Երամեց:
- 9 Ա Ամաղէկամարտ: Մովսէսի: Բ ձեռինն:
- 10 Ա փարաւովն: Ը հերձինապոյտ:
- 11 Բ ճակատն: Ը ճակատու:
- 13 Ա Շաւեղինաշնորհ: ԱԲ ուղեալ:
- 14 Բ ճեղ:
- 15 ԸԱ նըւէր: Ա յումմեմն: Ը Քիրամին: Խրնդիր յումմէ իմն իմաստոյ:
- 17 Բ 17—22-րդ տողերը չիք:
- 18 Ա Պէտ:
- 19 Ա կա: սիովնի:

Անց Սողոմոնեան շընչին փայտին հնաց ճարտարին.

Սարդին և սաւսին նոճ մայրենի խիտ յանտառէ:

Լրումն աւձինաշարժ զէն յահեկին աշաւորեալ.

Դէտ ինքն ի լերինն դաշտական՝ ի դէմ Փառանոյ:

25 Անվարժ յաւանակ, կառք քառանիւթ սրովբէասպաս.

Ենթակայէ սա ենթակայումն ամբարձունի,

Միշտ բազկատարած Քրիստոս ի սմա տեսաւորի.

Սովաւ եհար զպատերազմ, յաղթեաց մահու զաւրեղապէս,

Գերագոյն գրտաւ հայրապետաց աջ ընդ աշմէ:

30 Քահանայից պարծանք, ցուպ ի ձեռին խորհըրդական.

Սովաւ պանծալի պայծառանայ կաթուղիկէ:

Սա պըսակ շնորհաց արքունական նրշանադրոշ.

Սա դաստիարակ դաւանողաց յերրորդութիւնն.

Սա հրահանգապետ մաքրեցելոց շրով և հոգւով.

35 Սա պըսակ փառաց շնորհողին շնորհ երկրպագուացու:

Սա է ամրութիւն, պարիսապ՝ ընդդէմ ճակատողաց.

Սա միացելոց ի մի մարմին՝ պըսակ ի գլուխ.

Սա ճարտար բրժիշկէ է նեղելոց և վտանգելոց:

Սա է ախոյեան թագաւորաց և իշխանաց.

40 Սովաւ զաւրանան ազատագունդք տիեզերաց:

Սա անպարտելի սուսեր ընդդէմ զաւրավարաց.

Սա զալոց ընդ ամպը երկնից՝ կարապետ յառաջընթաց.

Սա նաւահանգիստ քրիստոսազունդ նորածնելոց.

Սա հրաժարելոց հոգւոցն ընդ ամսս է առաջնորդ:

45 Սա է ահարկու յահեղ աւուրն ապրստամբիցն.

Ի սմա երկրպագեն խաչեցելոյն խաչողքն ըզնա՝

Ի խոր խաւար խորին յահեղ փառաց խաչեցելոյն.

Թագ արքայէ նոյն արփայենից զրելոցն ի կեանս,

21 Ա Սողոմոնեան: Նախապես՝ «Հնար» ուղղված՝ «Հնաց»:

22 Ա Սարդիւն:

23 Ա ինքնն: ԱՅ լերին: Ա Փառանոյ: Յ Փառանոյ: Յ Պաշտանակ Փառանոյ:

25 Յ 25—26-րդ տողերը չիք: Յ և կառք աննիւթ սրորէասպաս:

26 Ա Ենթակայէ: Ենթակայումն: Յ Ենթակունակ բարձրաբերձի:

28 Յ Էար ըզպատերազմ:

29 Յ գտաւ:

30 Յ խորհըրդական:

31 Ա պանծալին: Յ կաթողիկէ:

32 Յ պսակ: Խշանադրոշ:

34 Յ Ա մաքրեցելոյ: Յ հոգով:

35 Յ 35—38-րդ տողերը չիք:

36 Ա Սալ:

40 Ա տիեզերաց:

42 Ա Կալոց է: Ա երկնից չիք: Յ Ա ամսս: և կարապետ փխ. կարապետ յառաջընթաց:

43 Յ նորայծելոց:

44 Ա «ընդ ամսս»-ի փոխարեն «լերկինս», որի վրա ուղղման նշան և լուսանցքում՝ «ընդ ամսս» Յ հոգոցն:

45 Յ յաղեղ: ապաստամբիցն:

46 Ա խաչեցելոցն: Յ երգոպագեն: Յ ի սմա փխ. ըզնա:

48 Ա սոյն: Յ արփայենից:

Ահեղակերպ փայլմամբ հուր կիզանող խընդիր վրիժուց,
 50 Դրաբութիւնք՝ հրաշից դրունք, բացարձակ բանին քակտումն.
 Երկուց վիմատիալ բանին տասնեան տառ պատգամաց:
 Սուր ի սրովբէին ձեռին, դատող ազգին հրէից.
 Ի քեզ ապաւինիմք երկրպագուքս խաշեցելոյն.
 Էին էացելոցս զքեզ փառատրեմք յանմահ ի կեանսն:
 55 Այժմ և յանապազ ձայնիւ երգով զՔրիստոս զովել՝
 Ընդ հաւր և հոգւոյն ի յանվախճան յաւիտենին:

2. Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի տաղ սուրբ խաչին

Սըրբոյ խաչին դաւրութիւն վաղագոյն տեսեալ,
 Մարգարէից սըրբոց գուշակեալ:
 Աւրհնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:
 5 Տունկ անմահութեան երևեալ պատուական խաչին,
 Փըրկող մեզ յայտնեալ ի թունից աւձին:
 Աւրհնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:
 Երկնաւոր սանդուղք ցուցաւ խաչն հողանիւթ բնութեանս,
 10 Բարձրանալ սովաւ ի յերկինս:
 Աւրհնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:
 Փառաց աթոռ անեղին երևեալ յերկրի,
 Սըրբոյ խաչին բարձեալ բզտէրըն տերանց:
 15 Աւրհնեալ է փայտն՝ ընծայող լուսոյն,
 Յորմէ ծագեաց մեզ լոյս, զմեզ լուսաւորեաց:
 Այսաւր ըզտաւնս կատարեմք լուսաղարդ խաչին,
 Որ եղե, ը՝, մեզ փրկութիւն:
 Աւրհնեալ է խաչն հրաշալի փառաւք,
 20 Տերունոյն արեամբըն ներկեալ.

49 Ե խնդիր վրիժոց: Ը կիզանաւու:

50—51 ԵԿ տողերը շիք:

52 ԵԿ Սըրբութիւնք (Ը Սըրբութիւնք) սրոբէից սուրբ խաչ, դատող ազգին հրէից:

53 Ե երկրպագուքս:

54 Ա ըեւ փիս, զքեզ: Փառատրիլ: Ե փառատրեմք: ԵԿ յաւեժ ի կեանս:

55 Ե 55—56-րդ տողերը շիք: Ը Այժմ և յանապազ Քրիստոս աւրհնեալ միշտ յաւիտեան:

56 Ա յանվախճան: Ը և փիս. իւ Վերջում որպես փոխ ԱԿ օրինակներում՝ շնորհանուրդ կենաց բերումն... տաղը:

Աղրյուր՝ Զեռ. № 3503, թերթ 234թ—235թ:

Խորագիր—Ստեփանոսի:

3 Զեռագրում՝ «ընծայող»: Ռողում ենք ըստ վերջին տան կրկնակի:

7 Այս և հաջորդ շորս տների կրկնակները զրված են կրծատ ձևով. լրացնում ենք ըստ տապին տան կրկնակի:

9 Զեռագրում՝ սանդուխը:

19—20-րդ տողերը նոր կրկնակի տպավորություն ևն թողնում: Կրանք երգի տներից շեն, որովհետեւ դուրս են ծայրակապի հաշվից:

Աւրծընեալ է փայտն՝ բնծայող լուսոյն,
Յորմէ ծագեաց մեղ լոյս, զմեղ լուսաւորեաց:
Ներգործեցեր յաշխարհի զգիտութիւն լուսոյ,
Որ եղեր, ը՛, մեղ ճանապարհ կենաց:
25 Աւրծընեալ ես, խաչ, պարգևող լուսոյ,
Ի քէն ծագեաց մեղ լոյս, զմեղ լուսաւորեաց:
Ո՞վ փայտ կենաց, որ կանգնեալ ի տեղոց բարձու,
Բարձեր ըզբարձաւոն յանցանաց մերոց:
Աւրծընեալ ես, խաչ, պարգևող լուսոյ,
30 Ի քէն ծագեաց մեղ լոյս, զմեղ լուսաւորեաց:
Սըրբեալ ըզմեղ մաքրեսցես ի մեղաց մերոց,
Որ եղեր սեղան սըրբարար հըրոյն:
Աւրծընեալ ես, խաչ, բնծայող լուսոյ,
Ի քէն ծագեաց մեղ լոյս, զմեղ լուսաւորեաց:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն*

Արքամինափորձ — Աբրահամին փորձող, նկատի ունի աստծու կողմից Աբրահամի հավատարմության փորձելը (Մնունդք, իթ):

Ամաղեկամարտ — Ամաղեկի կամ ամաղեկացիների դեմ մարտնչող. նկատի ունի Մովսես Մարգարեի գավազանը, որով ընթացք էր տրվում Ամաղեկի (ամաղեկացիների) դեմ մղվող ճակատամարտին՝ հօգուտ խրայելացիների (Ելք, Ժկ):

Անդինաշէն — Անեղի՝ աստծու ստեղծած, աստվածաշէն:

Անվայրենափակ — Անվայրափակ, անպարազիր, անսահման:

Աջառեալ — Աջ կողմում տեղ գտած:

Արփայենից — Արփային, արփենի, արեգակնացին, եթերային:

Կառակեռեալ — «Կառք» և «Կերտել» բառերից՝ կառաստեղծման իմաստով:

Շափդինաշնորհ — «Շափիդ» և «Շնորհել» բառերից. ճանապարհ շնորհող, ուղի նվիրող, ուղեցույց-առաջնորդ:

Սարեկանիւղ — Սարեկ—անծանոթ տունկ. ոստալից, երկճյուղ(“): Հիշված է աստվածաշնչում «սարեկ» ձևով (Մնունդք, իթ, 13):

Սէիր — (եռ Հուդա երկրի մոտ (Յեսու, ԺԵ, 10):

Փառան — Անապատի անուն (Մնունդք, իԱ, 21 և այլուր). նաև լեռան անուն (Բ օրէնք, լՊ, 2):

25 Այստեղից կրկնակը մասամբ փոխվում է:

30 Տողը սղված է. լրացնում ենք ըստ 26-րդ տողի:

33 Կրկնակը մասամբ փոփոխված է:

34 Տողը սղված է. լրացնում ենք ըստ 28-րդ տողի:

* Սույն բառացանկի մեջ արված են միայն Հայկական բառզրբից բացակայող բառերը:

А. Ш. МНАЦАКАНЯН

НОВООТКРЫТИЕ ТАГИ СТЕПАНОСА СЮНЕЦИ

(Р е з ю м е)

Литературное и научное наследие видного писателя и переводчика VII—VIII вв. Степаноса Сюнечи еще досконально не изучено. Публикация двух его новооткрытых тагов (гимнов), посвященных святому кресту, дает возможность, с одной стороны, составить более полное представление о творчестве этого выдающегося деятеля раннего средневековья, а с другой—уяснить закономерности становления и развития жанра тага, занимавшего важное место в средневековой армянской поэзии.

A. CH. MNATSAKANIAN

LES TAGHS DERNIÈREMENT DÉCOUVERTS DE
STEPANOS SIOUNETSI

(R é s u m é)

L'héritage littéraire et scientifique de l'écrivain et traducteur éminent des VII—VIII siècle Stepanos Siounetsi n'a pas encore fait l'objet d'une étude approfondie. La publication de deux de ses taghs (hymnes) nouvellement découverts consacrés à la Sainte Croix, permet d'une part de se former une idée plus complète de l'oeuvre de cette personnalité éminente du Moyen Age et, d'autre part, d'éclaircir les règles de l'apparition et de l'évolution du genre du tagh qui a occupé une place de choix dans la poésie arménienne médiévale.